

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ-ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ
ՎԱՀՐԺԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀՈՍՔԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) հոսքային դասարանները կազմավորվել են գյուղական դպրոցների բազայի վրա, մարզերի և ՀՊԱՀ-ի առաջարկությամբ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարի 07.04.2011թ-ի թիվ 01/07.1/3333-11 գրության հիման վրա: Հայաստանի մի շարք մարզերի հոսքային դասարաններ ունեցող 20 ավագ դպրոցների (ցանկը բերվում է) և ՀՊԱՀ-ի միջև կազմվել է համագործակցության պայմանագիր:

2. ՀՊԱՀ հանրակրթական ծրագրերի կենտրոն-հենակետային վարժարանի (այսուհետև՝ վարժարան) հոսքային դասարանների կազմակերպումը նպատակ է հետապնդում ՀՊԱՀ-ում իրականացվող կրթական ծրագրերի ուսուցման համակարգի վերաբերյալ տեղեկատվության միջոցով օգնել գյուղական դպրոցների բարձր դասարանցիներին մասնագիտական ճիշտ կողմնորոշման գործում և նախապատրաստել նրանց ՀՊԱՀ-ում ուսումը շարունակելու համար:

3. Հոսքային դասարաններում ուսուցումը շարունակվում է հանրակրթական դպրոցների ծրագրերին համապատասխան՝ միաժամանակ այդ շրջանակներում ավելի լայն ուշադրություն դարձնելով ապագա մասնագիտությունների հետ անմիջականորեն կապված առարկաների դասավանդման որակի բարձրացմանը:

4. Իրենց գործունեության ընթացքում հոսքային դասարանները ղեկավարվում են ՀՀ օրենսդրությամբ, հանրապետության միջնակարգ կրթության հաստատությունների և սույն կանոնադրություններով:

ՀՈՍՔԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Հոսքային դասարանները գտնվում են գյուղական դպրոցների կառուցվածքում, նրանց կառավարումն ու ֆինանսավորումը իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կարգով:

6. Գյուղական դպրոցների հոսքային դասարանները հանրակրթական ծրագրերն իրականացնում են 3 տարվա ընթացքում՝ 10-12-րդ դասարաններում:

Հոսքային դասարաններում սովորելու համար կարող են ընդգրկվել նաև տվյալ մարզի այլ դպրոցների աշակերտներ, որոնց ընդունելությունը կատարվում է ՀՊԱՀ-ի ներկայացուցչի մասնակցությամբ կազմակերպված հարցազրույցի արդյունքներով:

Հոսքային դասարանների համալրումը այլ դպրոցներից կարող է կատարվել նաև 11 և 12-րդ դասարաններից պետական կրթական չափորոշիչներին համապատասխան գիտելիքների ստուգմամբ:

7. Հոսքային դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպումը առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար ՀՊԱՀ-ն իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով նախատեսում է մշտական աշխատանքներ իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

- հենակետային վարժարանի և հոսքային դասարանների ուսումնական պլանների համակարգման և ժամանակակից պահանջներին դրանց համապատասխանության ապահովման;
- ուսումնամեթոդական և ուսուցման տեխնիկական միջոցների ներդրման ու օգտագործման;
- աշակերտների մասնագիտական կողմնորոշման;
- տեղերում և ՀՊԱՀ-ում պարբերաբար ուսուցման կազմակերպում վարժարանի ուսուցիչների և ամբիոնների դասախոսների կողմից;
- աշակերտների գիտելիքների պարբերական ստուգման;
- շրջանավարտների ՀՊԱՀ ընդունելության գործընթացի կազմակերպման:

8. Հոսքային դասարաններին տրվում է բնական գիտությունների հետևյալ ուղղվածություն՝ ֆիզիկա-մաթեմատիկա, քիմիա-կենսաբանություն, մաթեմատիկա-քիմիա և մաթեմատիկա-աշխարհագրություն կամ օտար լեզու: Նշված ուղղությունների որևէ մեկի կոնկրետ ընտրությունը կատարվում է՝ ելնելով աշակերտների նախասիրությունից, դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հնարավորությունից, ինչպես նաև առանձին մասնագիտությունների գծով մարզում գոյություն ունեցող պահանջից:

9. Հոսքային դասարաններում ուսումնական գործընթացը կազմակերպվում է ՀՀ Կրթության ու գիտության նախարարության հաստատված ծրագրերի հիման վրա ՀՊԱՀ հենակետային վարժարանի կողմից մշակված պլանների միջոցով:

10. ՀՊԱՀ հենակետային վարժարանի տնօրենի վրա է դրվում հոսքային դասարանների ուսումնական գործընթացի համակարգման պարտականությունները և նրա միջոցով է հիմնականում իրականացվում ՀՊԱՀ-ի կողմից նրանց ցուցաբերած ուսումնամեթոդական և այլ բնույթի օգնությունն ու աջակցությունը:

11. Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի համաձայնությամբ և ուժերով հոսքային դասարաններում ուսումնական ծրագրից դուրս՝ ելնելով աշակերտների նախասիրություններից, սահմանված կարգով կարող է կազմակերպվել առանձին առարկաների խորացված ուսուցում (այդ թվում նաև վճարովի):

12. Հոսքային դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր համակարգումը և վերահսկողությունը իրականացնում են ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը և ՀՊԱՀ-ն:

13. Հոսքային դասարանի վերակառուցումը և լուծարումը կատարվում է ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ Կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ, որն իրականացվում է ուսումնական տարվա վերջում: